ԿԱՆԱՉ ԳԼԽԱՐԿՈՎ ՀԵՏԱԽՈՅԶԸ

ԵՈՒՐԱ ՂԱՐԱՅԵԱՆ
(1967–1994)

Աստղացոյցով Այծեղջիւր էր, անընկճելի կամքի եւ հզօր բնաւորութեան տէր: Գործերը համակողմ ծրագրում էր, պարզութեան հասցնում եւ դրանց իրականացումը դառնում էր գրեթէ ինքնաբերական: Եուրայի համար պարզ էր, թէ օրուայ ո՛ր ժամին ինչ պիտի անէր. հաւաք էր ու ձիգ, ներամփոփ ու կենտրոնացած: Խոժոռադէմ էր, շամփրող հայեացքով եւ երկաթէ կարգապահութեամբ: Բոլոր յատկութիւններն ունէր հետախոյզ դառնալու եւ դարձաւ:

Միամօրիկ զաւակ էր: Հայրը մահացել էր, երբ ինքը 9 տարեկան չկար: Լաւ էր սովորում... երազում էր իրաւաբան դառնալ: Ազատագրական պայքարն սկսած պահին Վոլգոգրադում աշխատում էր: Վերադարձաւ... եւ ձերբակալուեց թուրքերի բնակավայրերը վառելու մեղադրանքով: 8 ամիս մնաց Շուշիի բանտում, տարուց աւելի՝ Աստրախանում, 6 ամիս՝ Արթիկում: Այստեղ ի վերջոյ հասկացաւ, որ անմիտ բան է պայքարի մարտիկին նոյն ազգի բանտում պահելը:

1992ի Ապրիլին ազատուեց ու վերադարձաւ ծննդավայր՝ Ստեփանակերտ եւ կամաւորագրուեց յատուկ նշանակութեան ջոկատին, որ պահպանում էր Խոջալուի օդակայանը: Ռմբակոծումից հրաշքով ողջ մնաց, դարձաւ Բեկոր Աշոտի վաշտի հետախուզութեան դասակի հրամանատարը: Փառապանուած զօրամասում Եուրան շուտով ձեռք բերեց արժանավայել հեղինակութիւն. բանակում ծառայել էր զօրէջքային (դեսանտ) գնդում եւ հետախոյզի գործին շատ լաւ էր տիրապետում: Ներքմբռնումի բնաթին մեծ ընդունակութիւն ունէր, որը հետախոյզի համար շատ կարեւոր է: Տեղանքում կողմնորոշուելն ու վայրկենական վճիռներ կայացնելը հետախոյզի մասնագիտութեան անբաժան մասն են: Աչքի է ընկել հենց առաջին հետախուզութեան ժամանակ՝ փրկելով ընկերների կեանքը:

Սարի-Բաբայի գործողութեան ժամանակ նա արդէն փորձառու ռազմիկի համբաւ ունէր: Դրանից էլ առաջ Բերդաձորի Սուարասի գիւղի մօտ թուրքերից երեք հրասայլ էին գրաւել: Իր մականունը եւ ազդանշի թիւը նոյնն էր՝ Օխտը, այսինքն՝ եօթ: Վաշտի, ապա գումարտակի հետախուզութեան գործը սկզբից մինչեւ վերջ մի քանի տղաների վրայ էր ծանրացած, գիշերները հետախուզում էին, ցերեկները՝ մասնակցում մարտերին: Մտերիմ ընկերներն էին Շօշի Ագօն, Գենօն, Սամուէլ Կարապետեանը:

Ագօն եւ Եուրան «մրցակցութեան» մէջ էին. ամէն ոք ձգտում էր աւելի մեծ ներդրում ունենալ մեր բանակի յաղթանակների մէջ: 1992ի Հոկտեմբերից գումարտակի հետախուզութեան հրամատարը արդէն Եուրան էր: Նոյեմբերի 4ին վիրաւորուեց Չլդըրան գիւղի մօտ: 4 գնդակներ մտել էին ձախ դաստակի մէջ: Բուժուեց մինչեւ 93 թուականը եւ վերադարձաւ մարտադաշտ: «Պարապուրդի» օգուտը այն եղաւ, որ ամուսնացաւ նշանած աղջկայ հետ, եւ իր զոհուելուց 4 ամիս անց ծնուեց Անուշիկը:

Գումարտակ վերադառնալուց յետոյ փայլուն կերպով կատարեց Աղդամի հետախուզութիւնը: Դրանից յետոյ եղել է Ղարաչինար, Բոյ-Ահմէդլի, Գիւլաթաղ, Ջանեաթաղ եւ Փափրաւենդ գիւղերի ազատագրման գործողութիւններում: Ապա այնտեղից Հադրութ եւ Ջեբրայիլ:

Զոհուել է Գիւլուջա գիւղի ազատագրման ժամանակ, 94ի Ապրիլի 14ին, արկի ուղղակի հարուածից: Եուրան կենդանութեան լեգենդ էր դարձել: Անմիտ վարմունքով իր սերը չշռայլեց աջ ու ձախ, այլ լրջախոհ հաստատակամութեամբ ամբողջովին նուիրաբերեց իր Հայրենիքին:

Աշոտ Պետրոսեան

DROSHAK - POLITICAL BIWEEKLY, 30TH YEAR, NO: 13 (1557), 13 - 26 JULY 1999